



## **ԵՎՐՈՊԱԿԱՆ պայմանագրերի շարք-թիվ 187**

**«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՇԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ՝ «ԲՈԼՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ  
ՄԱՀԱՊԱՏԺԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 13 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Վիլնյուս, 03.05.2002 թ.*

---

Եվրոպայի խորհրդի ներքոստորագրյալ անդամ պետությունները,

համոզված լինելով, որ յուրաքանչյուր անձի կյանքի իրավունքը ժողովրդավարական հասարակությունում հիմնական արժեք է, եւ մահապատժի վերացումը կենսականորեն կարեւոր է այս իրավունքի պաշտպանության եւ բոլոր մարդկանց բնորոշ արժանապատվության լիարժեք ճանաչման համար,

ցանկանալով ամրապնդել 1950 թվականի նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված՝ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) երաշխավորված կյանքի իրավունքի պաշտպանությունը,

հաշվի առնելով, որ Կոնվենցիայի՝ 1983 թվականի ապրիլի 28-ին Ստրաբուրգում ստորագրված թիվ 6 արձանագրությամբ, որը վերաբերում է մահապատժի վերացմանը, չի բացառվում մահապատիժը՝ պատերազմի ժամանակ կամ պատերազմի անմիջական վտանգի պայմաններում կատարված արարքների համար,

վճռական լինելով ծեռնարկել վերջնական քայլ՝ ուղղված բոլոր դեպքերում մահապատժի վերացմանը,

համաձայնեցին հետեւյալի շուրջ.

#### **Հոդված 1. Մահապատժի վերացումը**

Մահապատժը վերացվում է: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

#### **Հոդված 2. Շեղումներ կատարելու արգելքը**

Սույն արձանագրության դրույթներից չպետք է կատարվի որևէ շեղում՝ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն:

#### **Հոդված 3. Վերապահումներ կատարելու արգելքը**

Սույն արձանագրության դրույթների վերաբերյալ չի կարող կատարվել որևէ վերապահում՝ Կոնվենցիայի 57-րդ հոդվածի համաձայն:

#### **Հոդված 4. Տարածքային կիրառումը**

1. Ցանկացած պետություն կարող է Արձանագրությունը ստորագրելիս կամ դրա վավերագիրը, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ հանձնելիս նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ սույն արձանագրությունը կիրառվելու է:

2. Ցանկացած պետություն կարող է ավելի ուշ՝ ցանկացած պահի, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ սույն արձանագրության կիրառումը տարածել հայտարարության մեջ նշված որևէ այլ

տարածքի նկատմամբ: Այդ տարածքի նկատմամբ Արձանագրությունն ուժի մեջ է մտնում նման հայտարարությունը գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Նախորդ երկու կետերի համաձայն կատարված ցանկացած հայտարարություն, որը վերաբերում է դրանում նշված որեւէ տարածքի, կարող է չեղյալ հայտարարվել կամ փոփոխվել գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով: Չեղյալ հայտարարումը կամ փոփոխությունն ուժի մեջ են մտնում նման ծանուցումը գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

## **Հոդված 5. Կապը Կոնվենցիայի հետ**

Սույն արձանագրության 1-ին եւ 4-րդ հոդվածների դրույթները Կողմ պետությունների կողմից դիտվում են որպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ, եւ կիրառվում են Կոնվենցիայի համապատասխանաբար բոլոր դրույթները:

## **Հոդված 6. Ստորագրումը եւ վավերացումը**

Սույն արձանագրությունը բաց է Եվրոպայի խորհրդի՝ Կոնվենցիան ստորագրած անդամ պետությունների կողմից ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունը չի կարող սույն արձանագրությունը վավերացնել, ընդունել կամ հաստատել՝ առանց Կոնվենցիան նախկինում վավերացրած լինելու կամ միաժամանակ վավերացնելու: Վավերագրերը, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

## **Հոդված 7. Ուժի մեջ մտնելը**

1. Սույն արձանագրությունը, 6-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, ուժի մեջ է մտնում Եվրոպայի խորհրդի անդամ տասը պետությունների կողմից Արձանագրությամբ պարտավորված լինելու մասին իրենց համաձայնությունն արտահայտվելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:
2. Ցանկացած այն անդամ պետության համար, որն Արձանագրությամբ պարտավորված լինելու մասին իր համաձայնությունն արտահայտում է հետազայում, Արձանագրությունն ուժի մեջ է մտնում վավերագիրը կամ ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

## **Հոդված 8. Ավանդապահի գործառույթները**

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ծանուցում է՝

- ա. ցանկացած ստորագրման մասին.
- բ. վավերագիրը, ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին.
- գ. 4-րդ եւ 7-րդ հոդվածներին համապատասխան՝ սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվա մասին.
- դ. սույն արձանագրությանը վերաբերող ցանկացած այլ գործողության, ծանուցման կամ հաղորդագրության մասին:

Ի հավաստումն որի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալներն ստորագրեցին սույն արձանագրությունը:

Կատարված է Վիլյուս քաղաքում 2002 թվականի մայիսի 3-ին, մեկ օրինակից՝ անգլերեն եւ ֆրանսերեն, ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարագոր են, և այն ի պահ է հանձնվում Եվրոպայի խորհրդի արխիվներ: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը հաստատված օրինակներն ուղարկում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետություն:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2002թ. մայիսի 3-ին ստորագրված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից՝ «Բոլոր դեպքերում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն



**Protocol No. 13 to the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, concerning the abolition of the death penalty in all circumstances**

Vilnius, 3.V.2002

---

The member States of the Council of Europe signatory hereto,

Convinced that everyone's right to life is a basic value in a democratic society and that the abolition of the death penalty is essential for the protection of this right and for the full recognition of the inherent dignity of all human beings;

Wishing to strengthen the protection of the right to life guaranteed by the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms signed at Rome on 4 November 1950 (hereinafter referred to as "the Convention");

Noting that Protocol No. 6 to the Convention, concerning the Abolition of the Death Penalty, signed at Strasbourg on 28 April 1983, does not exclude the death penalty in respect of acts committed in time of war or of imminent threat of war;

Being resolved to take the final step in order to abolish the death penalty in all circumstances,

Have agreed as follows:

**Article 1 – Abolition of the death penalty**

The death penalty shall be abolished. No one shall be condemned to such penalty or executed.

**Article 2 – Prohibition of derogations**

No derogation from the provisions of this Protocol shall be made under Article 15 of the Convention.

**Article 3 – Prohibition of reservations**

No reservation may be made under Article 57 of the Convention in respect of the provisions of this Protocol.

**Article 4 – Territorial application**

- 1 Any State may, at the time of signature or when depositing its instrument of ratification, acceptance or approval, specify the territory or territories to which this Protocol shall apply.

- 2 Any State may at any later date, by a declaration addressed to the Secretary General of the Council of Europe, extend the application of this Protocol to any other territory specified in the declaration. In respect of such territory the Protocol shall enter into force on the first day of the month following the expiration of a period of three months after the date of receipt of such declaration by the Secretary General.
- 3 Any declaration made under the two preceding paragraphs may, in respect of any territory specified in such declaration, be withdrawn or modified by a notification addressed to the Secretary General. The withdrawal or modification shall become effective on the first day of the month following the expiration of a period of three months after the date of receipt of such notification by the Secretary General.

#### **Article 5 – Relationship to the Convention**

As between the States Parties the provisions of Articles 1 to 4 of this Protocol shall be regarded as additional articles to the Convention, and all the provisions of the Convention shall apply accordingly.

#### **Article 6 – Signature and ratification**

This Protocol shall be open for signature by member States of the Council of Europe which have signed the Convention. It is subject to ratification, acceptance or approval. A member State of the Council of Europe may not ratify, accept or approve this Protocol without previously or simultaneously ratifying the Convention. Instruments of ratification, acceptance or approval shall be deposited with the Secretary General of the Council of Europe.

#### **Article 7 – Entry into force**

- 1 This Protocol shall enter into force on the first day of the month following the expiration of a period of three months after the date on which ten member States of the Council of Europe have expressed their consent to be bound by the Protocol in accordance with the provisions of Article 6.
- 2 In respect of any member State which subsequently expresses its consent to be bound by it, the Protocol shall enter into force on the first day of the month following the expiration of a period of three months after the date of the deposit of the instrument of ratification, acceptance or approval.

#### **Article 8 – Depositary functions**

The Secretary General of the Council of Europe shall notify all the member States of the Council of Europe of:

- a any signature;
- b the deposit of any instrument of ratification, acceptance or approval;
- c any date of entry into force of this Protocol in accordance with Articles 4 and 7;
- d any other act, notification or communication relating to this Protocol.

In witness whereof the undersigned, being duly authorised thereto, have signed this Protocol.

Done at Vilnius, this 3rd day of May 2002, in English and in French, both texts being equally authentic, in a single copy which shall be deposited in the archives of the Council of Europe. The Secretary General of the Council of Europe shall transmit certified copies to each member State of the Council of Europe.

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը տեքստը 2002թ. մայիսի 3-ին ստորագրված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից՝ «Բոլոր դեպքերում մահապատճի վերացման մասին» թիվ 13 արձանագրության՝ ավանդապահի կողմից հաստատված օրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարության  
միջազգային պայմանագրերի և  
իրավունքի վարչության պետի պաշտոնակատար՝**



**Վահագն Փիլիպոսյան**